



Իրաւունքներու վրայ հիմնուած՝ Տարեցներու Խնամքի նոր Օրէնք

Տարեցներու Խնամքի նոր Օրէնքը տարեց մարդկանց իրաւունքներուն առաջնահերթութիւն պիտի տայ: Այն կը ներառէ Statement of Rights [Իրաւունքներու Յայտարարութիւն]՝ տարեցներու խնամքի ծառայութիւններէն օգտուող տարեց մարդկանց համար: Այս տեղեկատուական թերթիկը այդ իրաւունքներուն պարզ լեզուով ամփոփումն է:

Իրաւունքներու Յայտարարութեան մասին

Աւստրալիական Կառավարութիւնը կը փոխէ Աւստրալիոյ տարեցներու խնամքի օրէնքները: *Aged Care Act 2024* [Տարեցներու Խնամքի Օրէնք 2024] (նոր Օրէնքը) ունի Իրաւունքներու Յայտարարութիւն մը: Այս կը բացատրէ թէ ինչ իրաւունքներ ունին տարեց մարդիկ, Աւստրալիոյ Կառավարութեան կողմէ ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններէն օգտուելու ժամանակ: 1 Նոյեմբեր 2025-ին, Իրաւունքներու Յայտարարութիւնը պիտի փոխարինէ ներկայ Տարեցներու Խնամքի Օրէնքի Կանոնադրութիւնը:

Նոր Օրէնքի լման Իրաւունքներու Յայտարարութիւնը կը գտնուի այս տեղեկատուական թերթիկի վերջաւորութեան:

Իրաւունքներու Յայտարարութիւնը ինչ կը նշանակէ ձեզի համար

Իրաւունքներու Յայտարարութիւնը պիտի օգնէ ապահովելու, որ դուք ձեր տարեցներու խնամքին կեդրոնը գտնուիք:

Այն ձեզի իրաւունք կու տայ՝

- կայացնելու ձեր սեփական որոշումները ձեր սեփական կեանքի մասին
- որ ձեր որոշումները ոչ միայն ընդունուին այլեւ յարգուին
- ստանալու տեղեկութիւն եւ աջակցութիւն՝ ձեր որոշումները կայացնելու օգնութեան համար
- հաղորդելու ձեր փափաքները, կարիքները եւ նախասիրութիւնները
- ապահով եւ յարգուած զգալու
- որ ձեր մշակոյթը եւ ինքնութիւնը յարգուի
- կապուած մնալու ձեր համայնքին հետ:

Անկախութիւն, ընտրութիւն եւ վերահսկողութիւն

Դուք իրաւունք ունիք ձեր սեփական որոշումները կայացնելու եւ զանոնք վերահսկելու.

- ինչ ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններէ կ'օգտուիք
- ինչպէս կ'օգտուիք ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններէն եւ ով կը տրամադրէ զանոնք
- ձեր դրամը եւ ինչքերը:

Դուք իրաւունք ունիք այս որոշումները կայացնելու համար աջակցութիւն ստանալու, եթէ կարիքը ունենաք:

Դուք նաեւ իրաւունք ունիք ընտրելու թէ ինչպէս կ'ապրիք, նոյնիսկ եթէ կայ որոշ անձնական վտանգ: Օրինակ՝ ձեր ընկերային կեանքի եւ մտերիմ յարաբերութիւններու վերաբերեալ ընտրութիւններ:

Արդար օգտագործում

Դուք իրաւունք ունիք արդար եւ ճշգրիտ գնահատման՝ պարզելու համար թէ ինչ ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններ անհրաժեշտ են ձեզի համար:

Այս գնահատումը պէտք է կատարուի ըստ ձեր յարմարութեան: Այն պէտք է յարգէ ձեր՝

- մշակոյթը եւ ծագումը
- անձնական փորձառութիւնը եւ որեւէ տագնապ
- ճանաչողական խանգարումներ, օրինակ՝ մտագարութիւն:

Դուք նաեւ իրաւունք ունիք ստանալու ձեզի անհրաժեշտ խնամքը, երբ որ կարիքը ունիք:

Այս կը ներառէ ամօքիչ խնամք եւ կեանքի վերջին շրջանի խնամք:

Ապահովություն եւ որակ

Դուք իրաւունք ունիք ապահով, որակեալ եւ արդար ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններու, որոնք ձեզի հետ կը վերաբերուին արժանապատուութեամբ եւ յարգանքով:

Այս կը ներառէ օգտուելու իրաւունք ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններէ որոնք.

- կը գնահատեն եւ կ'աջակցին ձեր ինքնութեան, մշակոյթին եւ ծագումին
- կը յարգեն ձեր փորձառութիւնը, ներառեալ որեւէ տագնապ
- մատչելի են եւ կը բաւարարեն ձեր կարիքները
- ազատ են բռնութենէ, չարաշահումէ եւ անտեսումէ:

Դուք իրաւունք ունիք օգտուելու ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններէ.

- ճիշդ մարզուած, հմտութիւններ եւ փորձառութիւն ունեցող աշխատողներէ
- տարեցներու խնամքի օրէնքներու պայմանները բաւարարող մատակարարողներէ

Եթէ տարեցներու խնամքէն օգտուելու ժամանակ անապահով զգաք, կրնաք ձրի աջակցութիւն ստանալ փաստաբաններէ, ընկերային աշխատողներէ եւ այլ մասնագէտներէ: Տարեցներու դէմ բռնութենէ պաշտպանութեան վերաբերեալ յաւելեալ տեղեկութեան համար այցելեցէք [Attorney-General's website](#) (Գլխաւոր Դատախազի կայքէջը)

Յարգանք ձեր խորհրդապահութեան եւ տեղեկութեան հանդէպ

Ձեր մատակարարողը պէտք է.

- յարգէ ձեր անձնական խորհրդապահութիւնը
- պաշտպանէ ձեր անձնական տեղեկութիւնները, օրինակ՝ ձեր առողջութեան եւ նիւթականի վերաբերեալ տեղեկութիւններ:
- թոյլատրէ ընտրել թէ, երբ կարելի է տրամադրել ձեր անձնական տեղեկութիւնները ուրիշ մէկու մը, օրինակ՝ փաստաբանի կամ իրաւաբանի մը:

Դուք իրաւունք ունիք ստանալու արձանագրութիւններ եւ տեղեկութիւն՝ ձեր իրաւունքներու եւ ձեր օգտագործած ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններու մասին: Այս կը ներառէ անոնց ծախսը:

Հաղորդակցութիւն, որ կը համապատասխանէ ձեր կարիքներուն

Դուք իրաւունք ունիք.

- ստանալու տեղեկութիւն ձեզի համար հասկնալի ձեւով
- կարծիք յայտնելու

Դուք իրաւունք ունիք հաղորդակցելու ձեր նախընտրած լեզուով կամ ձեւով: Այս կը ներառէ օգտագործել թարգմանիչներ կամ, հաղորդակցութեան միջոցներ՝ եթէ կարիքը ունիք:

Դուք նաեւ իրաւունք ունիք հանդիպելու ձեր մատակարարողին եւ ձեր աջակիցներուն հետ, ըստ ձեր յարմարութեան: Այդ կը նշանակէ հանդիպիլ ձեզի համար օրուայ ամենայարմար ժամին:

Աջակցութիւն՝ խնդիրները արագօրէն եւ արդարօրէն առաջացնելու համար

Երբ խնդիրներ կան ձեր ֆինանսատրուոյ տարեցներու խնամքի ծառայութիւններուն հետ, դուք իրաւունք ունիք.

- աջակցութիւն ստանալու ձեր մատակարարողէն
- բողոքելու առանց վախի կամ պատժուելու
- ստանալու արագ եւ արդար պատասխան ձեր բողոքներուն:

Աջակցութիւն եւ յարաբերութիւն մարդոց եւ համայնքի հետ

Դուք կրնաք աջակցութեան կարիք ունենալ ձեր իրաւունքները հասկնալու, որոշումներ կայացնելու կամ բողոք մը ներկայացնելու համար: Դուք իրաւունք ունիք ստանալու այս աջակցութիւնը անկախ փաստաբանէ մը կամ ձեր ընտրած այլ անձէ մը:

Դուք իրաւունք ունիք հաղորդակցելու ձեր փաստաբանին կամ աջակցող անձին հետ, երբ որ դուք ուզէք:

Մատակարարողները պէտք է յարգեն ձեզի համար կարեւոր մարդկանց դերը: Օրինակ՝ ընտանիք, բարեկամներ եւ խնամողներ:

Դուք իրաւունք ունիք կապի մէջ մնալու.

- ձեզի համար կարեւոր մարդկանց հետ
- ձեր համայնքին՝ ներառեալ մասնակցելով ժամանցի եւ մշակութային գործունէութիւններու
- ձեր ընտանի կենդանիներուն:

Ապորիճինի եւ Թորոնտո Նեղուցի Կղզիի բնակիչներ իրաւունք ունին կապի մէջ մնալու իրենց համայնքին, Երկրին եւ Կղզիին հետ:

Ինչպէս ապահովել ձեր իրաւունքներու պաշտպանութիւնը

Ձեր մատակարարը պէտք է հասկնայ եւ հետեւի Իրաւունքներու Յայտարարութեան Եթէ չեն հետեւիր, դուք կրնաք բողոք ներկայացնել Բողոքարկութիւններու Յանձնակատարին (Complaints Commissioner):

Դուք կրնաք բողոք ներկայացնել առցանց, հեռախօսով կամ նամակով: Յաւելեալ տեղեկութեան համար այցելել՝ [Aged Care Quality and Safety Commission website](#)

Եթէ բողոք ներկայացնելու կամ տեղեկութիւն գտնելու համար կարիք ունիք աջակցութեան, հեռաձայնեցէք Older Persons Advocacy Network (OPAN) 1800 700 600 հեռախօսահամարով:

OPAN -ը ունի ձրի, անկախ եւ գաղտնապահ փաստաբաններ որոնք կրնան օգնել ձեզ:

Նոր Օրէնքի Իրաւունքներու Յայտարարութիւնը՝ ամբողջութեամբ

Ստորեւ, Նոր Օրէնքի 23րդ բաժինէն, ամբողջութեամբ ներկայացուած է Իրաւունքներու Յայտարարութիւնը:

Անկախութիւն, ինքնավարութիւն, լիազօրութիւն եւ ընտրութեան ազատութիւն

(1) Անհատ մը իրաւունք ունի.

(a) ընտրելու եւ կայացնելու որոշումներ որոնք կ'ազդեն անհատի կեանքին, ներառեալ հետեւեալներու հետ առնչուող.

(i) ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւնները, որոնցմէ անհատը օգտուելու արտօնութիւն ստացած է.

(ii) ինչպէս, երբ եւ որու կողմէ այդ ծառայութիւնները կը մատուցուին անհատին.

(iii) անհատին ֆինանսական գործերը եւ անձնական ունեցուածքը. եւ

(b) աջակցութիւն ստանալու (եթէ անհրաժեշտ է) այդ որոշումները կայացնելու, եւ այդ որոշումները յարգուելու համար. եւ

(c) անձնական վնասի հաւանականութիւններ ստանձնելու, ներառեալ անհատի կեանքի որակի հետապնդում, ընկերային կեանքի մասնակցութիւն եւ մտերիմ ու սեռային յարաբերութիւններ:

Անկողմնակալ օգտագործում

(2) Անհատ մը իրաւունք ունի անկողմնակալ մատչելիութեան.

(a) անհատին, ֆինանսաւորուող տարեցներու ծառայութիւններու կարիքի գնահատումը կամ վերագնահատումը կատարել այնպիսի ձեւով մը որ ըլլայ.

(i) մշակութային առումով ապահով, մշակութային առումով պատշաճ, տագնապի գիտակից եւ բուժումէ տեղեակ. եւ

(ii) մտազարութեամբ կամ այլ ճանաչողական խանգարում ունեցող անհատներու համար մատչելի եւ յարմար. եւ

(b) անհրաժեշտութեան պարագային ամոքիչ խնամք եւ կեանքի վերջի շրջանի խնամք:

Որակեալ եւ ապահով ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններ

(3) Անհատ մը իրաւունք ունի.

(a) արժանապատուութեամբ եւ յարգանքով վերաբերուելու. եւ

(b) ապահով, արդար, անկողմնակալ եւ ոչ խտրական վերաբերմունքի. եւ

(c) անհատին ինքնութիւնը, մշակոյթը, հոգեկանը եւ բազմազանութիւնը գնահատուելու եւ աջակցուելու. եւ

(d) Ֆինանսաւորուող տարեցներու խնամքի ծառայութիւններու մատուցում անհատին.

- (i) ձեռով մը որ մշակութային առումով ապահով է, մշակութային առումով պատշաճ, տազնապի գիտակից եւ բուժումէ տեղեակ. եւ
- (ii) մատչելի ձեռով մը. եւ
- (iii) արձանագրուած տարեցներու խնամքի աշխատողներու կողմէ, որոնք ունին համապատասխան որակաւորումներ, հմտութիւններ եւ փորձառութիւն:

(4) Անհատ մը իրաւունք ունի.

- (a) ազատ ըլլալու ամէն տեսակ բռնութենէ, նուաստացուցիչ կամ անմարդկային վերաբերմունքէ, շահագործումէ, անտեսումէ, հարկադրանքէ, չարաշահումէ կամ սեռային անպատշաճ վարմունքէ. եւ
- (b) ունենալ որակեալ եւ ապահով ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններ, որոնք կը մատուցուին այս Օրէնքով արձանագրուած մատակարարներու համար սահմանուած պահանջներուն համապատասխան:

Նշում. 3-րդ Գլուխի 4-րդ Մասի թիւ 1 Բաժինը կը վերաբերի արձանագրուած մատակարարներու պայմաններուն, ներառեալ սահմանափակիչ գործելակերպի կիրառման եւ միջադէպերու կառավարման հետ առնչուող պահանջներ:

Յարգանք խորհրդապահութեան եւ տեղեկութեան հանդէպ

(5) Անհատ մը իրաւունք ունի իր.

- (a) անձնական խորհրդապահութեան հանդէպ յարգանքի, եւ
- (b) անձնական տեղեկութեան պաշտպանութեան:

(6) Այս բաժնի տակ, անհատ մը իրաւունք ունի խնդրելու եւ ստանալու արձանագրութիւններ եւ տեղեկութիւն իր իրաւունքներուն մասին, եւ ստացած ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններու վերաբերեալ, ներառեալ այդ ծառայութիւններուն արժէքը:

Անձնակէդրոն հաղորդակցութիւն եւ խնդիրներ առաջացնելու կարողութիւն՝ առանց փոխ հատուցման

(7) Անհատը իրաւունք ունի.

- (a) տեղեկացուած ըլլալու անհատին հասկնալի ձեռով, իր օգտուած ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններու մասին. եւ
- (b) արտայայտել կարծիքներ անհատի օգտուած ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններու մասին եւ լսելի ըլլալ:

(8) Անհատ մը իրաւունք ունի հաղորդակցելու անհատին նախընտրած լեզուով կամ հաղորդակցութեան միջոցով, անհրաժեշտութեան պարագային օգտուելով թարգմանիչներէ եւ հաղորդակցութեան միջոցներէ:

(9) Անհատ մը իրաւունք ունի.

- (a) բացայայտ հաղորդակցութեան եւ աջակցութեան, արձանագրուած տրամադրողներու կողմէ՝ երբ խնդիրներ առաջանան ֆինանսաւորուած տարեցներու խնամքի ծառայութիւններու մատակարարման մէջ. եւ
- (b) ֆինանսաւորուած տարեցներու ծառայութիւններու կողմէ անհատին մատակարարման մասին բողոքներ ներկայացնել առանց փոխ հատուցման վախի, օգտագործելով մատչելի մեքենականութիւն. եւ
- (c) անհատի բողոքներու արդար եւ արագ քննարկում:

Փաստաբաններ, կարելոր անձեր եւ ընկերային կապեր

- (10) Անհատ մը իրաւունք ունի աջակցութիւն ստանալու փաստաբանի մը կամ իր ընտրած այլ անձի մը կողմէ, ներառեալ այս բաժնին մէջ անհատի իրաւունքները գործադրելու կամ հասկնալ փորձելու ժամանակ, անհատի կարծիքները արտայայտնելու, անհատին կեանքին ազդող որոշումներ կայացնելու եւ բողոքելու կամ կարծիք յայտնելու ժամանակ:
- (11) Անհատ մը իրաւունք ունի ճանչնալու եւ յարգելու անհատին համար կարելոր անձերու դերը, ներառեալ խնամակալներու, այցելուներու եւ կամաւորներու:
- (12) Անհատ մը իրաւունք ունի հնարաւորութիւններու, եւ օգնութեան, կապի մէջ մնալու (եթէ անհատը այդպէս ընտրէ) հետեւեալներու հետ.
 - (a) անհատի կեանքին մէջ կարելոր անձերու եւ ընտանի կենդանիներու, ներառեալ՝ ընտանիքի անդամներու, բարեկամներու, կամաւորներու կամ այլ այցելուներու կողմէ ապահով այցելութեան միջոցով, ուր անհատը կը բնակի եւ կ'այցելէ ընտանիքի անդամներ կամ բարեկամներ. եւ.
 - (b) անհատի համայնքին, ներառեալ մասնակցութիւն հասարակական կեանքի եւ ժամանցի, մշակութային, հոգեւոր եւ կենսաբեր գործունէութիւններու. եւ
 - (c) եթէ անհատը Ապորիճիին կամ Թորոս Նեղուցի Կղզիի բնակիչ մըն է – համայնք, Երկիր եւ Կղզի:
- (13) Անհատը իր նախընտրած ժամանակին իրաւունք ունի օգտուելու, իր կամ յարմար մարմինի մը կողմէ նշանակուած անձէ մը: